

բունակ տեսութեան՝ բնականօք եւ մակստացականօք առատացեալ գովարանութեամբ» կը գտնուէին յանձին Մովսէսի: Նոյն հեղինակէն են նաեւ տողերս. «Սրբազան եւ երջանիկ հայրապետն Մովսէս . . . անհամեմատ գտեալ յարդիս . զոր ոչ ոք կարացէ ըստ քանիօնութեան նորայ արտավիպել . եւ զի է քեզ կալջիր նպատակ զՊարթեւն Սահակ կամ զմեծն Ներսէս՝ ըստ բնութեան բարուցն, ըստ մաքրութեան կենացն, ըստ ուղղութեան ընթացիցն, ըստ առաւելութեան արդեանցն ի վերայ ազգիս եւ ըստ այլոց ամենայնի»²: Ուրիշ մերձաւոր մը կաթողիկոսին կը վկայէ³ թէ «էբ ահարկու, տեսեամբ զուարթերես եւ վայելուչ հասակաւ, որպէս ճառի յազազս սուրբ հայրապետին Տղայ տէր Գրիգորին եղբորորդւոյն Ս. Ներսեսի»: Աւելի հատու է Նիկողայոս զբչի վկայութիւնը (1632). «որ ծաղկեալ է եւ բարզաւածեալ բնական, բանական, կրթական իմաստութեամբ, մանաւանդ կրկին նորոգող եւ լուսաւորող հայկազուն սեռի»: Եթէ արտաքին մարդուն կը հային այս նկարագրականները, ուրիշներ չեն զանգիտեր նաեւ անոր ներքնոյն պատկերը գծել, վեր հանելու համար «առաքինի վարուք»⁴ եւ «սրբասնեալ ճգնող կաթողիկոսը»⁵, որ «մաքրակենցաղ է եւ սրբասնունդ, երկայնամիտ եւ ողորմած»⁶,

² Տե՛ս էջ 4, ծ. 5:

³ Ղուկաս զբիշ. էջմ. 2372, 355բ:

⁴ Թորոս Աղբար, Բ. 428 (ճաշոց 1630էն):

⁵ Անդ, էջ 450—452:

⁶ Առ. Դաւրիթեցի, 312: